

ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Հայաստանի Հանրապետություն

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր լրացուցիչ ֆինասավորում
Վարկի No. 8523-AM

Պայմանագրի անվանումը՝ Ա/6 Մ1-Կարմրաշեն-Ոսկեթաս-Ձովասար կմ 0+000-կմ 11+410

ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ

Հղում No. CW-NCB-LRNIP-AF-2017/3

Պատվիրատու. ,Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ

Հեռ. + 374 12-20 10 10

Կայք. www.tpio.am

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ստացել է լրացուցիչ ֆինանսավորում Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել Ա/6 Մ1-Կարմրաշեն-Ոսկեթաս-Ձովասար կմ 0+000-կմ 11+410 (Արագածոտնի մարզ, Հայաստան) ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներ պայմանագրի շրջանակներում:
2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպությունե պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է CW-NCB-LRNIP-AF-2017/3 ներքո Ա/6 Մ1-Կարմրաշեն-Ոսկեթաս-Ձովասար կմ 0+000-կմ 11+410 ճանապարհային հատվածի վերանորոգման շինարարական աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ գոյություն ունեցող ենթահիմքի քանդում և նոր ենթահիմքի կառուցում, նոր խճային հիմքի կառուցում, ասֆալտե ծածկույթ, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացում, ճանապարհային անվտանգության ապահովման և այլ աշխատանքներ: Աշխատանքները պետք է ավարտվեն 9(ինը) ամսվա ընթացքում: Պայմանագրին արժանանալու համար հայտատուն պետք է ունենա նմանատիպ շինարարական աշխատանքների փորձ եւ համապատասխան ռեսուրսներ, ինչպես մանրամասն ներկայացվել է մրցութային փաստաթղթերում:
3. Մրցույթն իրականացվելու է «Ազգային մրցակցային գնմանե (NCB) ընթացակարգին համապատասխան, ինչն ամրագրված է Համաշխարհային բանկի «ՎՋՄԲ վարկային և ՄՋԸ փոխառությունների շրջանակներում գնումների ուղեցույցովե (Հունվար 2011, վերանայված Հուլիս 2014) և այն բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությանը:
4. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են ներբեռնել ամբողջական մրցութային փաստաթղթերը www.gnumer.am կամ www.armeps.am կայքերից: Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցված մասնակիցները ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կից մրցութային փաստաթղթերով (նշված CPV կոդերին համապատասխան): Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլեկտրոնային գնումների համակարգում և հնարավորություն ունենալ ներկայացնել հայտեր ARMEPS (www.armeps.am կայք) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:
Այնուամենայնիվ, ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը պատասխանատվություն չի կրում պոտենցիալ հայտատուների կողմից վերոնշյալ կայքերից փաստաթղթերի սխալ կամ թերի ներբեռնման համար, ինչպես նաև հետագայում մրցութային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:
5. Հայտերը պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով ARMEPS (www.armeps.am կայք) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով մինչև 2017թ. դեկտեմբերի 11-ը, ժամը 14:30 (Երևանի

ժամանակով): Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

6. Ինչպես նշված է ITB 19.1 կետում, բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: